

Այս առթիւ պարտք կը համարինք միանգամայն խնդրել մեր արհեստաւորներէն որ հաճին յղել մեզ այս նշկատմամբ իրենց ուսումնասիրութիւններն զորս սիրայօժար կը հրատարակենք, կը կարծենք որ այս եղանակաւ իրենանք մեծապէս օգտակար ըլլալ իրենց՝ լուսաբանելով խնդիրն եւ գործնական առաջարկութիւններ թելադրելով իրենց:

ՆԱԽԿԻՆ ՎԱՐՉԱՎԱՆ ԳՐՈՒԹԻՒՆ

ՕՍՄԱՆԵԱՆ

Թէեւ ժամանակակից իրողութիւններ են այն փոփոխութիւնը՝ զորս Օսմանեան կայսերը յարմար դատեցին ներմուծել Օսմանեան կայսրութեան վարչական դրութեան մէջ, սակայն եւ այնպէս մեր հարթ աւանդաբար շատ քիչ բան կրցած են մեզ հաղորդել ի մասին վարչական այն նախկին դրութեան՝ որոց հետք նշմարելի են տակաւին։

Եւ սակայն կարծենք նուազ կարեւոր չէ գիտնալ այդ անցեալը՝ որ այնչափ սերտիւ կապուած է ներկային եւ որ ոչ միայն մեծազօր կայսրութեան մը հիմնարկութեան ձեւը կը պարզէ, այլ եւ ըստ բաւականին կը բացատրէ նորա տիրող ոգին եւ ընկերական վիճակն։

Օսմանեան վարչութեան նախնական դրութիւնը նշանակութեան արժանի է իւր կրօնական եւ զինուորական կրկին հանդամանօք։ Արդարեւ նախկին վարչական դրութիւնը կ'ստորաբաժանուէր չորս գլխաւոր մասերու։ Կրօնական պաշտամունքը մշտնջենք իշխէ, զինուորական պաշտամունքը մշտնջենք, ատենական պաշտամունքը մշտնջենք և կայսերական պաշտամունքը մշտնջենք։ Գալով դատական իշխանութեան յայտնի է արդէն թէ անի կրօնական իշխանութեան անբաժանելի մի մասն էր երբեմն։ Իսկ արդ, ի բաց առեալ կայսերական պաշտամունքը, որը հասարակաց վարչութեան հետ ուղղակի վերաբերութիւն մը չէին կրնար ունենալ, եւ ատեն նախ պաշտամունք, ըստ որում վարչական ուրոյն ճիւղ մը չեն կրնար համարուիլ, Օսմանեան վարչութիւնը կրօնական եւ զինուորական կրկին իշխանութեանց մէջ կը բաժնուէր։

Բայց ընկերական ճշմարտութիւն մ'է արդէն, թէ կրօնական հանգամանօք օժտեալ մի վարչութիւն, թէ եւ ըլլայ անհրաժեշտ եւ փրկարար ապահովութիւն մը առ նախնական ժողովուրդս, անսպառն հոլութիւններ միայն կ'ընծայէ այն ատեն երբ ժողովուրդը մը իւր վերջնական կազմակերպութիւնն ստանալով՝ բաւական երաշխաւորութիւններ կ'ընծայէ արդարութիւնը դրապէս պահպանելու։ Այդ անպատեհութիւններ կը ծագին ամեն տեսակ ընկերական պիտոյից համապատասխանելու կոչուած կրօնից պատրաստած օրինաց կիրառութեան, օրէնք՝ որը իրենց անյեղական հանգամանօք եւ իրաց բնական բերմամբ, վարչութեան զանազան ճիւղերն իրենց անսահման իշխանութեան տակ ձգելով՝ յառաջ կը բերեն վարչական անխորհուրդ խառնուրդ մը ընդ հսկողութեամբ կրօնական իշխանութեան։

Ինչ օգուտ սակայն, ընկերական օրէնքներն, ինչպէս ամեն բնական օրէնք, չունին բացառութիւն, ուստի եւ հարկ էր որ Օսմանեան նորածին Ազգն ալ անցնէր ընդ այն ճանապարհ, ուստի անցած էին աւելի հին ազգեր, ա'լ աւելի մեծնալու եւ զօրանալու համար։

Այն զինուորական դրութիւնն՝ որ ինչպէս ըսինք, Օսմանեան իշխանութեան կէսը կ'ընդգրկէր երբեմն, կրնայ նկատուիլ թերեւս իբր ընդօրինակութիւն մը եւրոպական աւատական դրութեան։ մեզ կը թուի սակայն թէ երբեք զինուորական ա-

ւատականութիւն մը չէ տուած այնքան հիմնալի առաւելութիւններ որքան Օսմանեան զինուորական աւատականութիւնն։ Եւ սպառնքիքն ի նորհա սոյն դրութեան Օսմանեան աշխարհն համայն պաշտօն ունէր երկրին զինուորական ուժերը խնամելու և պահելու միշտ ի պատրաստի։ դրութիւն՝ որ լաւագոյն օրերու մէջ Օսմանեան բանակին այրուձին մինչեւ 200,000 հոգւոյ պատկանելի թուոյն հասուցած էր։

Նորանոր աշխարհակալութիւնը՝ որը Օսմանեան աշխարհը կ'ընդարձակէին շարունակ, տիրապետեալ երկրներու բաժանմամբ կը վերջանային։ Այդ բաժանում տեղի կ'ունենար բաժանելի հողերուն տիրապետութեան պատերազմաց մասնակցող զօրաց եւ զօրավարաց եւ կայսերազուն իշխանաց ընդ մէջ, մինչդեռ մաս մը լաւագոյն հողեր Նորին Վեհափառ կայսրութեան կը վերապահուէին խառն հիւսիսային անուամբ։

Զօրաց եւ զօրավարաց բաժանելի երկրներն ըստ հասութի քանակութեան երեք մասանց կ'ստորաբաժանէին։

Դրճար կը կոչուէին այն երկրներն՝ որք մինչեւ քսան հազար ստակ հասոյթ կուտային։ մինչեւ հարիւր հազար ստակ հասոյթ տուող հողերը զաւթէն կ'անուանէին, մինչդեռ խառն կը համարուէին ալ աւելի հասոյթ տուող հողերն։

Աւելորդ է ըսել թէ, բաժանեալ այդ երկրներն անտէր (rest nullus) հողեր չէին բնաւ, այլ արդէն մշակեալ սեպհականութիւնը նոյն երկրներու բնակչաց որք կը շարունակէին մշակել իրենց հողերն, օրինական տասնորդ մը վճարելով անոնց՝ որոց վեհ. կայսերը նուիրած էին զայնս։ Ասկայն պէտք է յաւելուի թէ նախկին հողատեարց, այսինքն քաղաքացի եւ գիւղացի ժողովրդեան առ հասարակ, հողերն հերկելով եւ արգասաւորելով ի գործ ածած իրաւունքը բնաւ սեպհականութիւն մը չէր եղած որքայնչաք կառավարութեան՝ որ հողատէր սահմանքը կը ճանչէր միայն անոնք որոց նուիրուած էին։ կը հետեւի ուրեմն թէ, նախկին հողատեարց սեպհականութեան իրաւունքն, այս կերպիւ կը փոխարկուէր գործածութեան իրաւունքի մը՝ որ յայտնի է թէ մեծապէս կը տարբերի առաջինէն։

Հողատիրութեան այս իրաւամբ, որ ժառանգական էր ամեն մասամբ, երկրին տասնորդական տուրքերէն գոյացած հասոյթըն ինչպէս նաեւ հողերու առուծախին ստիժի վճարելի փոխանցման տուրքերը կը վերաբերէին հողատիրոջ՝ որ հողերուն Բաֆէններն ընդունելու, հանլէւի գործերը կարգադրելու, Բաֆէնի ֆէյդները տալու եւ ընդհանրապէս երկրը կառավարելու իրաւունքն եւ ի փոխարէն զինուորական ծառայութեան պարտականութիւնն ունէր։

Նուաճեալ երկրներու բաժանումը կը նկատուէր իբր փոխարկութիւն մը զինուորական ծառայութեան եւ միանգամայն իբր միջոց ապրուստի զինուորականաց՝ որոց կը շնորհէին վեհ. կայսերը. և ահա այս պատճառաւ այդ երկրներն ընդհանրապէս կը կոչուէին ֆաթիհի ֆէյդներ։

Դրճար ֆէյդներն երեք կարգի կը բաժնուէին. առաջին կարգի մէջ կը գտնենք եւլիճի Դրճարը ըսուած ֆէյդներն որք ընդհանրապէս ֆէյդներու մեծագոյն մասը կը կազմէին եւ որոց տեարք ի պատերազմ կը ղիմէին ընդ հրամանատարութեամբ Աւայ պէյի անուն զօրավարաց։

Երկրորդ կարգը կը կազմէին հասթաֆէյդ

Դրճարը ըսուած երկրներն՝ զորս ստացող զինուորականը կայսրութեան բերդերն եւ այլ զինուորական գիւրքերը պաշտպանելու պաշտօնն ունէին եւ վերջապէս երրորդ կարգին մէջ կը մտնէին Էլեմէթ Դրճարը կոչուածներն, որք կայսերական պաշտպան եւ այլ քանի մը պաշտամանց յատուկ էին։

Գալով Դրճարի տեարք զինուորական պարտաւորութեան, նոքա իրենց հողերուն որոշեալ արժէքին ի բաց առեալ առաջին երեք հազար ստակն՝ որ Էլեմէթ Դրճար այսինքն զինուորական անձնական ծառայութեան փոխարժէք կը կոչուէր, մնացեալ մէկ մի երեք հազար ստակի փոխարէն կայսերական բանակին մէկ ճեպլէ կամ որ նոյն է մէկ հետեւակազօր տալու ստիպեալ էին. մինչդեռ խառն եւ զաւթէն ֆէյդներու տեարք իրենց հողերու որոշեալ արժէքին մէկ մի հինգ հազար ստակին փոխարէն մէկ զրահակիր ձիաւոր պարտական էին պատրաստել։

Տէրէֆներու լաւագոյն մասն՝ որ խառն կը կոչուի ըսինք, խառն եւ խառն հիւսիսային անուամբ կրկին մասանց կը բաժնուէր եւ այս վերջինները միայն կայսերական անձնական գանձուն կը վերապահուէին, իսկ առաջինները կայսերազն իշխանաց եւ զինուորական ու քաղաքային բարձրաստիճան պաշտօնատարաց կը տրուէին։ Պէտք է գիտնալ սակայն թէ, ի բաց առեալ բարձրաստիճան պաշտօնատարաց, որպէս Պէյլէր Պէյիներու, Միրի Լիվաներու եւ այլոց տրուած ֆէյդներն անձնական չէին բնաւ. ըստ որում տիրիքի դրութիւնը պաշտօնատարաց ամառական վճարելու դրութեան տեղը կը բռնէր, նաեւ զանազան պաշտօններ ունէին իրենց յատուկ ֆէյդներ որոց հաճոյքը նոյն պաշտօնին կոչուող պաշտօնատարին կը վերաբերէր, ցորչափ մնար նա ի պաշտօնի. այսպէս էր օրինակի համար, Կիպրոս կղզին իւր ամբողջութեամբ որ իբր խառն ֆէյդ Մեծ Եպարքոսութեան կը պատկանէր։

Այս կարգի խառն կամ զաւթէն ֆէյդներն, իրաց բնական բերմամբ, փոխանորդաց ձեռք կը կառավարուէին, հակառակ այն դրութեան՝ որոյ համեմատ հողատեարք ընդհանրապէս իրենց հողերուն մէջ բնակելու պարտական էին։

Պէտք է յիշել սատ Էնթիլա-Է Եմալէֆ անուամբ ծանօթ կարգ մը հողեր՝ որոց օրինական հասոյթն հողատեարք կը պատկանէր բերդի մը կամ զինուորական գիւրքի մը ծախուց փոխարէն։ Այս կարգին կը վերաբերէին կայսրութեան արեւելեան սահմանաց վրայ գտնուած երկրներն՝ զորս Սուլթան Սելիմ անուանեալն Նապոլի բա. բեհաճած էր շնորհել սահմանաբնակ բուրգ պէյերու։

Դրճարի տեարք կը կազմէին այն ֆէյդայի կոչուած զօրաց զուեղերն՝ որոց կը հրամայէին յաջորդաբար Սու-Պաշը, Աւայ-Պէյի եւ Միրի-Լիվա կամ Սանճաք-Պէյի։

Մինչեւ Սուլթան Մուրատ երկրորդի գահակալութիւնն, Օսմանեան կայսրութեան երկրներն Անատոլիա եւ Բուլղարի անուամբ կը բաժնուէին երկու բնական եւ զլխաւոր մասերու որք ի կարգին սահմաններու կ'ըստորաբաժնուէին։ Այս զինուորական երկու մեծագոյն բաժանմանց կը հրամայէին երկու բարձրագոյն զօրավարներ, Անատոլիա Պէյլէր Պէյի եւ Բուլղարի Պէյլէր Պէյի. իսկ այն սահման-Պէյիներն որ երկրին ստորաբաժանումները կը կառավարէին, այս բարձրագոյն զօրավարաց տրամադրութեան ներքեւ դրուած էին։

ասպէլ ներկայեցում մասին՝ խորհեցաւ ի իրեն
ընդ անկերեւէ Ե. ասպա ուրեմն պէտք է Գա-
րագաշեան համարձակի արձանագրել թէ՛

Ա. Սուտ է խորհեցաւ երբ կ'ըսէ՝ «երկ-
նէր երկին եւ երկիր» հրաշալի քերական-
ծին առթիւ՝ թէ լաւաւ ակնհայտ է՝ Երեմիք :

Բ. Սուտ է թէ Շարայի շատակերու-
թեան առանձն հասարակ զրոյց մը դարձել
էր ժողովրդեան մէջ :

Գ. Սուտ է Վարդգէսի հատուածն, Ար-
տաշիւի եւ Սաթրիանի հարսներդն, Ար-
տաշագոյ առասպելն ¹⁾ եւ վերջապէս այն
ամենայն ազգային հնութիւնքն, զորս խո-
րհեցաւ գանձարանն ամփոփած է :

Ինչո՞ւ անկողնակալութեան կ'ընդունի մի
և նոյն պատմագրին այս ինչ խօսքն ճշմար-
տութիւնն եւ այն ինչ խօսքն ստույգութիւնը
քաւի էր Բաղդադէն Եւսէպիոսէն : Եւ չէ՞ Բաղդա-
դէի Գարագաշեանի քննադատութեան ձեռ-
նարկին, այլ ընդ նմին ապա Եւսէպիոսէն թէ
նա՝ նիւթապաշտ իմաստասիրաց գաղա-
փարներով նախապաշարեալ՝ ամենաստույգ
իրերն, անձերն ու աւանդութիւններն իբր
սուտ համարած ու հռչակած է, չէ՞նք զի
Բաղդադէի Գարագաշեանի քննադատութեան
ժամանակ Եւսէպիոսէն չէ :

Այսպէս իմաստն ու իրեն Նիւթապաշտ եւ
Գարագաշեանի քննադատութեան չէ :

ՎԱՐԴԱՆ Կ. ԱՐՍԼԱՆԵԱՆ

ՄԱՅՐՈՒԹԻՒՆԸ

ՖԻԶԻԿԱԿԱՆ ԵՒ ԲԱՐՈՅԱԿԱՆ ԱՇԽԱՏԻ ՄԵՋ

(Շար. նախորդ թուէն եւ վերջ)

Ի՞նչ կ'ըսեմ, եւ ո՞վ զգացած չէ՝ Երկ-
րէն իսկ կորցուածի պէս է մարդ կարծես
այն պահուն, կը թռչի իւր նիւթական
շղթայներն, եւ բոլորովին զմայլած այն նոր
կեանքէն որ անշուշտիւ կ'երթին հետ կը
բոլորի իւր շուրջ, կ'սկսի երազել, գը-
րեթէ մոտաբերել աշխարհ մը, ուր, նման
բնակչաց դաշտացն Եդիստեանց, ուրիշ բա-
նով չը պիտի կերակրի բայց եթէ անուշա-
հոտութեամբ եւ լուսով : Ուրեմն խիստ
սքանչելի հիւթ մ'է օգն : Ուրեմն խիստ
զարմանալի գործիք մ'է կործերը : Եւ եթէ
գիտուածաւ, մեր գործարանաց բաշխման
մէջ, Աստուած սահմանած է նուիրապե-
տութիւն մը, կործերն անշուշտ առաջին
տեղը պարտի դրաւել : Արդարեւ, շնչա-
ռական գործարանին կատարելութիւնը կը
թուի իւրաքանչիւր տեսակի արժէքին չա-
փուն : Անանոց մէջ, ո՞րքան թոքային կաղ-
մուածք տկար է եւ ցած զետեղուած ցեղի
մը մէջ, այնքան այդ ցեղը կ'իջնէ ինքնին
կենդանականութեան աստիճանին մէջ, ինչ-
պէս բարեխոսած են ձիու տեսակը : Ար-
կեսընթաց ձրով, այսինքն միայն թոքով
զի կրկեսընթաց ձին չէ այլ ինչ բայց եթէ
կատարելագործեալ շնչառական մեքենայ
մը : Մարդկային ցեղերու մէջ, ո՞րքան տի-
պարը բարձրանայ, օգտուաւ գործարանն՝
ամենաբարձր սահմաններու մէջ կը հանէ,
սպաւէս ըսելու համար՝ իւր հետ կը քաշէ,
սիրտը, լեարդը, բոլոր միւս գործարան-
ներն : Եւ երբ հասնիք Կաւկասեան ցեղին,
եւ մասնաւորապէս կեղտական ցեղին, կը
տեսնէք կործերն՝ ընդլայնած, պարանոցն՝

երկարած, եւ շնչառման տեղին զօրեղա-
պէս հաստատուած մէկ ուսէն միւսն : Արդ,
եւ ահա տարի նպատակի տն ուր կը ձգ-
տին սոյն զննութիւնը, մարդկային երկու
էակներէն ո՞րն յինքն կը կրէ ամենէն կա-
տարեալ շնչական կազմուածք : Այնն *) :

Ո՞րն, հետեւաբար, արդ ինչապէս
գործին մէջ զլիւսաւոր գերն իւր վրայ ա-
ռած է : Այնքա՞ն, կ'ընեն ուրեմն, ո՞չ միայն իւր
ցեղին նախատիպարին պահպանողն է, այլ
աւանդապահն այն գերլիւսանութեան յատ-
կանական կնքոյն զոր ունի մարդկային տե-
սակն կենդանեաց տեսակներուն վրայ, եւ
այն ինչ ցեղն ուրիշ այն ինչ ցեղին վրայ :
Մարդը կը շնչէ, որպէս խոնարհագոյն տե-
սակները, թոքին ցածագոյն մասովն, իսկ
կ'ընեն՝ բարձրագոյն մասովն : այս վերջինս
ուղղակի աւելի հաղորդակցութեան մէջ է
նորոգիչ մթնոլորտին հետ : Երկնային եւ
խորհրդաւոր սնունդի աղբերական մօտ գե-
տեղուածի պէս է նա : Այսպէս ահա կը
բացատրուին հազարաւոր տարօրինակ երե-
ւոյթներ : Յաճախ գիտուած է զարմացմամբ
թէ կանայք խիստ նուազ կ'ուտեն քան թէ
արք, նոյն իսկ երբ շատ աշխատած լինին :
Քանզի աւելի կ'ուրձնով կ'ապրին նոքա :
նոքա կ'ապրին, ինչ օրինակ առնելով բա-
ցատրութիւն մը՝ որ շատ անգամ անոնց գէմ
ծաղրականի կը փոխուի եւ որ իրենց բնու-
թեան մեկնութիւնն իսկ է, նոքա կ'ապ-
րին օդով : Ո՞վ պատահած չէ, նոյն իսկ
մարդկանց մէջ, միոյն այն էակներէ՝ որք
առանց դնդերային ոյժ ունենալու, առանց
շատ ուտելու, առանց իրենց սպառած զօ-
րութիւնը դարմանելու, գերմարդկային
յողնութեանց կը տոկան : Ո՞ր է իրենց ու-
ժոյ գաղտնիքը : Քանզի օդով կ'ապրին : Ձը-
րանոցը տիպարն են այդ մարդոց : Օտար
գործար մը, առաջին անգամ հանդիպելով
պատերազմի դաշտին վրայ Եգիպտոսի եւ
Խալիլոյ ահարկու յաղթականները, կ'ըսէր,
ի տես անոնց փոքր հասակին, նիհար ան-
դամներուն եւ գունատ գէմքին : «Մեր
չունէր միայն բաւ պիտի լինի զանոնք տա-
պալելու» : Կուռնոյն հետեւեալ օրը, կը
գրէր նա : «Սատանայնք են ագոնք» :
Գերմանը չէին կրնար իրենց զարմանքը բռ-
նել : Կը նայէին իրենց կ'ընէին եւ գիտուի
անգամ, կը կ'ընէին, կը շօշափէին իրենց
անձն, եւ կը հարցնէին իրենք իրենց թէ
ի՞նչպէս յաղթուեցան հինգ ոտք բարձրու-
թեամբ փոքր մարդերէ : Քանզի այս փոք-
րիկ մարդեր՝ իրենց ուժն ու նորոգիչ օգ-
նականութիւնն՝ ուրիշ տեղէ կ'առնուին :
Նոքա, ստամոքսը լի եղած ատեն միայն
կրնան քայլել, կուռնի, եւ այդ բնական է :
բայց տուէ՛ք Ֆրանսացոյն կտոր մը հաց եւ
մատ մը գինի, ահա իւր թշնամին մինչեւ
աշխարհիս ծայրը փնտռելու եւ հետը կըռ-
ուելու պիտի երթայ : Ինչո՞ւ համար : Որով-
հետեւ ո՞չ մի ժողովուրդ, Ֆրանսացի ժո-
ղովրդին չափ, կ'ընէ զաւակ չէ : որովհետեւ
ո՞չ մի ժողովուրդ մէջ, կ'ընեն այնքան գրօ-
ւած չէ՝ իւր յատկութիւնը շնչառու կաղ-
մուածին կազմաւորութեան վրայ՝ որքան
Ֆրանսացի ժողովրդին մէջ : որովհետեւ ո՞չ
մի ժողովուրդ չ'ապրիր այնքան օդով ոքան
Ֆրանսացին :

Լեզուներն անգամ, միւս գործարանաց
վրայ՝ շնչառութեան գործարանին առա-
ւելութեան յարգանք մատուցած են առ-

նըլով անկից ոյն բաղմամբիւ ասացուած-
ներն որք բարոյական բարձր հանգամանք-
ներ կը բացատրեն :

Լատիներէն spirare (շնչել) բայն,
անգլիերէն spirit, որ կը նշանակէ զովելի
եռանդ, Ֆրանսերէն spiritualisme (հոգե-
պաշտութիւն), եւ esprit (ոգի, հանձար)
որ կը նշանակէ գիւնոյն թէ՛ ամենաբուռն
եւ անըմբռնելի մասն, եւ թէ իմացակա-
նութեան այն շնորհալից հանգամանքն՝ որ
մտաց այն է ինչ որ բոցը՝ կրակին, եթերն՝
օդին, ծաղիկը՝ ծառին : Երբ ուղուի նկա-
րագրել բանաստեղծական հանձարն իւր
բովանդակ գորութեան մէջ, կ'ըսուի թէ
շնչելի է : Վերջապէս, սուրբ Օգոստի-
նոս, իւր գեղեցիկ լեզուով, որ այնքան
թափանցիկ եւ խորին է, ձգած է որտի
սա աղաղակն որ ամեն ինչ կ'ըսէ : Orare,
spirare, աղօթելը՝ շնչելն է : Աղօթքն հոգ-
ւոյն շունչն է առ Աստուած բարձրացած :
Մեծարանք ուրեմն պահպանողութեան այն
գործարանին որ կը ներկայացնէ ինչ որ կայ
մարմնոյն մէջ ամենէն աւելի անմարմին, եւ
կը ծառայէ իբր անց նիւթական եւ մոտա-
ման աշխարհներու միջեւ : Աղաղակեան
այսօրինակ ապացոյցներէ ետք, այլ եւս
ներելի չէ հօրմէն խոնարհագոյն յայտարա-
րել մայրն : Իւր հաւասարութեան առաջին
տիտղոսն իւր արարչին ձեռք գրուած կը
կրէ իւր իսկ անձին վրայ, եւ վերադար-
ձնելով ընդ գէմ մեր հակառակորդաց ի-
րենց ընծայած տեսութիւնն որով հաղա-
բաւոր տարիներէ ի վեր նետած են մայրն
ամենէն յետին տեղը, կրնա՞նք ըսել ի մեր
կարգին : Ձեր հաւասարն է նա աստուա-
ծային իրաւամբ :

Այս է մայրութեան գերը՝ Ֆիզիքական
բնութեան մէջ : Բարոյական բնութիւնն ա-
ւելի մեծ կը ցուցնէ մեզ զայն :

Անանոց մէջ, մայրութիւնը միայն կը
նմանի զգացման մը : իրենց հայրական սէրը
բացառութիւն մ'է եւեթ, իրենց սեռային
սէրը բնազդաւոր եւեթ : Բայց մայրութիւ-
նը կուտայ իրենց կանխատեսութիւն, գո-
րով, անձնութիւնութիւն, զիւրապետութիւն
իսկ : Մատակ առիւծն որմէ կը յափշտակեն
իւր կորիւնները, կը լինի ահարկու որպէս
արու առիւծն : Բայց սա կը հետանայ այդ-
պիսի պարագայի մը մէջ : Ականատես եղայ
փոքր շիկահաւ մօր մը քաջասրտութեան :
Իւր բոյնը շինած էր մայրաքի մը մէջ : Հայրն
ու մայրը, ձուերը թխտելու համար, կար-
գաւ կը նստէին բոյնին վրայ, ըստ սովո-
րութեան այդ սիրուն թռչնոց : արդ, երբ
արուին պահապան եղած միջոցին կը մեր-
ձենայի, արուն կը խուսափէր բարձր տե-
րեւներուն մէջ, թռչտելով, գոչելով, յուզ-
ուելով, բայց վերջապէս կը խուսափէր :
Կարգն երբ էզին գար, ընդհակառակն,
կը կենար նա : Ի զուր ձեռքս իրեն դուր-
նելու աստիճան կը յառաջանայի, նա կը
կենար : Ար տեսնէի իւր փետրոց տակ փոք-
րիկ սրտին բաբախելն, իւր սեւ աչքին կը-
րիկ սրտին բաբախելն, իւր սեւ աչքին կը-
րիկ սրտին բաբախելն : Բայց հոգ
չէր, նա կը կենար : Անտարակոյս զգացում
մը կար այդ գործին մէջ : քաջասրտութիւն
ունէր այդ թռչնը, բանի որ կը տեսնէր
թէ վախ կար : անձնութիւնութիւն ունէր :
բանի որ կ'զգար թէ ինքզինք զուհեւ պիտի
դիմէր անվեհեր : Մայրական սիրովն, ա-
նասունը կը հպի գրեթէ մարդկային բը-
նութեան, եւ մարդկային բնութիւնը կը
բարձրանայ մինչեւ ցանկութիւն աստուա-
ծային :

Ո՞ր հայրն, արդարեւ, կը ժառ համե-

¹⁾ Գիշեր մը ի հայրենիս մօրս հետ կ'ա-
կանջէինք մի խուլ տըմբալըմբոյ, մայրս ինչ
պատմեց թէ ԳԵՐԻԻՆ ԿԸ ԾԵԾԵՆ :

²⁾ Բոլոր այս իրողութիւնք, այնքան հե-
տաքրքրական, մեկնուած են մեզ Պ. ՍԷՆ
գիտունի կողմէ անձամբ :

մատենի իւր խոսքն աղաւթնաբեր մօր մը խոսն-
գաղաւթնաբեր : Քա՛ն լիցի թէ ուրանալ ու-
ղեմ հայրական դորովը : բայց մարդուն մը
համար հայրութիւնը դիպումը մէջ, իսկ
կանանց համար մայրութիւնը կեանքն է :

Նորքա, որք տակաւին կ'ուրանան անոնց
ստեղծիչ յատկութիւնը, տեսած չե՞ն եր-
բէք մօր մ'իւր նորածինը բազկաց մէջ ըն-
դունիլը : Դիտած չե՞ն երբէք աստուածա-
յին այն հայեացքն՝ որ ներշնչած է Ռաֆայ-
էլի գողտր հանձարն եռանդուն Ռիւսէ-
սի, Մանի տը Մէտիլիի պատկերին մէջ :
Տեսած չե՞ն երբէք մօր մ'իւր մանկան ա-
ռաջին քայլին հետեւին, անոր առաջին
խօսքին ունկնդրելն, և աւա՛ղ, անոր վեր-
ջին շունչն ընդունելը : Երբ տղայ մը կը
մեռնի, հայրը կուլայ, բայց ժամանակը
մոռցնել կուտայ նմա այդ ցաւն ուրիշ ցա-
ւոց նման : սակայն մօրն համար վէրք մ'է
այն անթշնչելի : Երբեմն կը հանդիպինք
կանանց դէմքերու որոց վրայ դրօշմուած է
յոռահատութեան յատուկ կնիք մը : Իրենց
գունատութիւնը, քաղցրութիւնն, ի բն
ձայնին վհատելի շեշտն, իրենց ճակատն՝ որ
կուրծքերնուն վրայ խոնարհած է, կը մատ-
նեն ի նոսա չը գիտեմ ինչ բան անդար-
մանելի կերպիւ խորտակուած որ մարդուն
սիրտը կը ճնշէ : մինչեւ իսկ երբ ժպտին,
կը տեսնուի թէ լալու մօտ են : տեղեկա-
նանք թէ ինչ է իրենց նեղութեան շար-
ժառիթը : մեզ պիտի ըսեն զրեթէ միշտ որ
դորա իրենց գաւակն ի ծաղիկ հասակի կոր-
սնցուցած մայրեր են : Աին մը, վարակեալ
այն մահացու ախտով որ տասն տարի յա-
ռաջ իւր որդին խլած էր իրմէ, գոչեց,
հրգեմարբի տագնապոց մէջտեղ : Ա՛հ, ո՛ր-
քան տանջուած է արդեօք խեղճ գաւակս
Մոռնալով իւր իսկ ցաւն, իւր տղուն ըզ-
գացած ցաւուն վրայ կը մտածէր : Այսպէս
է ահա մայրական սէրն : Արարչագործու-
թեան մէջ առանց հաւասարի, այդ սէրը
կը ծնի մի վայրկեանի մէջ, անհուն, անսահ-
ման, անհաշուելի, ա՛յնքան զօրաւոր, որ
զինքն զգացող էակը կը յափշտակէ կը տանի
անդր քան բնութեան օրէնքներն, կը փոխէ
ցաւն հաճոյից, զրկումը՝ վայելից, և այս
ո՛չ թէ դիպումը աւ, անցողակի շարժմամբ
որպէս սիրոյ մէջ, այլ հանապազ եւ ան-
խոնջ : Ժամանակը զայն չը մարեցներ, ծե-
րութիւնը զայն չը սառեցներ, զի անոր
համար չը կայ անկում ինչպէս եւ յառաջ-
դիմութիւն : Աշխարհի առջի օրէն ստեղ-
ծուած է նա ա՛յնպէս կատարեալ որպէս
այսօր, եւ Եւա գիտէր այդ կէտի վրայ
ա՛յնքան որքան Հեկիբոս¹⁾ եւ թագուհին
Պլան²⁾ : Ամեն բան ըսած եղանք այսչա-
փով : Ա՛հ : Իբր վերջին հրաշք, մայրական
սէրը՝ զինքն զգացող էակն ամբողջովին կը
վերանորոգէ եւ նմա իբր դաստիարակ կը
ծառայէ : Իրմով, պճնասէր կինը կը լինի
լուրջ, անզգայը՝ խորհող : կը լուսաւորէ,
կը մարբէ նա : կը նշանակէ թէ՛ առաքի-

նութիւն եւ խոսքն աղաւթնաբեր, թէ՛ ան-
նուիրութիւն եւ սէր : մէկ բնութիւն մարդ-
կային սիրտն է նա բոլորովին :

Աւաւիկ Արարիչը Քրիստոսական եւ բարո-
յական աշխարհին մէջ ինչ գեր նշանակած
է մայրութեան :

ԷՄԻԼԵՍԹ ԼԸԿՈՒՎԷ Թարգմ.
ԱԿԱԴԵՄԻԿԱՆ ԱՐՏԱՇԷՍ Մ. ՄԿՐԵԱՆ

Ա Ռ Ա Կ

ԱՂՈՒԷՍ ԵՒ ԱՔԼՈՐ

«Վարդափառի տօն է այսօր,
իջիր ծառէդ սիրուն Աքլոր,
ինձ հետ կարգաւ երգ շարական,
Մատաղն օրհները տէրութեան :
Աղուէս այսպէս պէտք ծառն ի վեր
Ի՛նչ համոզկեր խօսք կը նետէր,
Որուն Աքլոր պատարխանէր :
«Սակայն ինձ նախ հարկ է, Աղուէս,
Որ ժամկոչի ձայն ձգեմ ես :

Ապա իջնել
Ու ժամ երգել,

«Կուկուկուկու, տօն է այսօր,
«Սուրբ Կարապետն է փառաւոր : :

«Սըրբիկին լայս սուր ձայնէն
«Շնիկն ըսձա՛ր՝ հասաւ անդէն,
«Խածնէր զԱղուէս, որ կ'ոռնար
«Բըքտուելով անդող սր :
«Իսկ աքլորիկն ծառին վերէն
«Աղուէս, կ'ստէր ծիծաղելէն,
«Այդ անձոռնի ձայնով պիտի
«Երգէիր տօն Վարդափառի : :

ՎԱՀԱՆ ՎՐԴ. ՊԱՐՏԻՉԱԿԵՒ

ՍԻՍԱԿ ԵՒ ՍՈՍՈՒՆ (12)

ԲՆՈՒԹԵԱՆ ՍՈՒԱԿՆԵՐ

(ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱՐՔԵՐ)

Դուք երբէք պաշարի պէտք չ'ունիք,
մենք անպարի բեռ մը, գաղաւթ, խորիւս,
ձուռաղեղ, եփուած ձու, պանիր և պատ-
րաստած ենք եւ երկու հատ ալ գառ
հետերնիս կը տանինք հոն մատղեղու հա-
ձար : Միթէ դուք օտա՛ր էք, որ ձեզ պատ-
գաւար կը շինէք, կ'ըսէ Գեղեցիկը : մինակ
«Երբեք ձեր մօր հրամանն առնել, ու-
րիշ բանի հարկ չը կայ :

Բայց միթէ մայրս կ'ընդունի՞ որ ես
բոլորովին դատարկ ելնեմ ու խափ երթամ,

տէրութեան խնամակալութիւնն իրեն ան-
ցած էր, որ ա՛յնքան ապստամբական տագ-
նապնեւում արիւստութեամբ դէմ դնելէ
հալ, մտահաւորապէս մեծ խնամք կը տա-
նէր իւր տղուն բարուրդը կրթութեանն հա-
մար, նոյն իսկ ինքը կարգուելով նմա դաս-
տիարակուհի : Իւր մայրական սէրը խիստ
բուռն էր, այնպէս որ կ'ըսէր իւր որդւոյն.
«Նախապաշար կը համարիմ մեռնիլդ, քան
մահու չափ մեղք մը գործելդ, վասն զի,
գաւակս, աշխարհիս վրայ քեզնէ աւելի սի-
րելի բան մը չ'ունիմ : » (Թ)

մեր տան պատուոյն կուգա՞յ այդպէս բան,
եթէ մայրս իմ գաղուն հաճի, այդ բաները
նշանակութիւն չ'ունին : Դուք գիտես, կ'ը-
սէ Գեղեցիկն : ալ ինչ վարպետութիւն որ
գիտես ի գործ դիր մայրդ հաւանեցնելու :

Վարպետութեան տեղի չկայ, կ'ըսէ Սո-
սուն, երբ մայրս ալ՝ արտով համակիր է
ձեզ, եւ շատ անգամ մեր առանձնութեան
ժամերուն եղբորդ մասին կ'ուզէ շատ բա-
նէր խօսիլ ինձ, բայց ես կը պատկառիմ
եւ այլ ընդ այլ ընդ միջոցներով խօսքի
նիւթը կը փոխեմ, հակառակ իմ բոլոր
բաղձանաց : Սոսուն նկատելով որ արուս-
եակի մթնխառն ճառագայթներն աւելի
զօրանալով՝ առաւօտեան լոյսը բացուեցաւ,
Գեղեցիկն դառնալով կ'ըսէ. «Իրաւ է որ
կ'ըսեն, կիներէն դիւան, էջերէն կարա-
ւան : » Այնքան խօսեցանք որ ժամանակի
անցնիլը մոռցանք, հիմա մայրս ինձ կ'ըսուա-
սէ որ՝ երթամ աշխարհերը բռնեմ որպէս զի
կ'ըսէ, շուտ ըրէ ուրեմն, սափորդ լից եւ
վեր եկէ՛, ես պիտի երթամ, մնա՛ս բարով,
Սիսակին բան չը գրուցես, եթէ ձեզ ըն-
կերանամ, վստահ եմ որ շատ անուշ ուխ-
տագնացութիւն մը պիտի ընենք :

Եւ քանի որ իւր առաջին քայլը փոխած
չ'էր Սոսուն ու Գեղեցիկի դիմացը կայնած
կը խօսէր, «Երթա՛ս բարով», ըսաւ Գեղե-
ցիկն, որով իմ մէկ հատիկ եղբոր պաշտելի հը-
րեշտակն, երանի՛ այն օրն որ, անսնեմձեր
թագն ու սլակն, ո՛չ որքան երջանիկ պի-
տի լինի իրօք իմ անուշիկ Սիսակն : Ու միշտ
Սոսունի քայլերին հետեւելով աչքով, կ'ը-
սէր, այո՛, իմ եղբայրն իրաւունք ունի իր
ընտրութեան մէջ, նա երբէք խաբուած
չ'է, ինչպէս կ'ասեն ոմանք, երբ ես որ կին
եմ եւ այդ հրեշտակաղեղ աղջկան շնորհա-
լի-գեղեցիկութենէն ու գիւթիչ լեզուէն կը
յափշտակուիմ, հապա՛ եղբայրս, միամօր
եղբայրս՝ որոյ միայն արժանի է Սոսուն :
բայց նորա հայրն՝ այնքան անգութ է որ
ստակի համար ամեն բանը կարելի է
մոռնայ, — կը սարսափիմ մտաբերել որ
սիրելի եղբորս գերեզմանը պեղայ, ինչպէս
այս գիշեր իւր քնոյ մէջ կ'ըսէր նա : Եւ ա-
պա դէպի աղօթարանը դառնալով բազկա-
տարած եւ արտասուահոս կ'աղօթէ այս-
պէս :

«Օրհնեալ ի բարի լուսոյ Աստուած,
օրհնեալ Քրիստոսի սուրբ աղօթարան : Դուք
օգնական եւ պահապան եղնիք իմ մէկ եղ-
բորդ : Երկիրպագանեմ այն Աստուծոն որ
փրկեց զմեզ այս գիշերուան փորձութենէ :
Կը խնդրեմ որ իմ եղբայր իր մուրափին
հասնի, անոր կանանչ կորիձ արեւը մեզ
բաշխէ, հող եւ մոխիր դառնամ ընդ. ով
զօրաւոր սուրբ Գէորգ, դուն բարեխօս ել-
նես առ Աստուած, ու կատարես իմ տի-
լաքը՝ (անդիր) գո՛հ եմ ընէ՛ Աստուած, բո-
բարիք վեր իմ գլխին, բո՛ւք պահապան
եղնի իմ աղբեր Սիսակին, եթէ անոր փոր-
ձանք մը կամ ցաւ մը կայ ինձի թող դայ,
իմ խոր տան ճրագն է նա, ով Աստուած
թող վառ մնայ : » Գեղեցիկի այս սրտաբուխ
աղօթից ձայնին հետ կը խառնուէին նաեւ
արտասուաց այն սուրբ կաթիլներն որոնք
սահելով նորա չընաղ այտերու վրայէն իր
ծունկերի ներքեւ բողբոջած մարգերը կը
թանային :

Իսկ Սիսակն, իր բոլոր ուշանալը տես-
նելով՝ աղբիւրի հարաւային կողման ձորա-
մէջէն եկեր՝ նորա հանդիպակաց բարի մը
ետին թագչած եւ ուշադրութեամբ մը մը-
տիկ ըրած էր իր բոլոր ու Սոսունի միջեւ
փոխանակուած խօսքերն ու Գեղեցիկի վեր-

1) Հեկիբոս, Պրիամուս կինն էր : Տրոյիոյ
աւան ժամանակ մինչ Յոյնը կը կոտորէին
ժողովուրդն, ասոյին բազմին մ'առջեւ Հե-
կիբոսի զրգիլը, թուով տասն ինն, իւր
աչաց առջեւ կը խողխողէին իրենց հօր՝
Պրիամուս հետ, Աքիլլէսի որդւոյն՝ Պիւռոսի
կողմէ : Դժբաղդ մայրը փոփոխեց կը տես-
նէր իւր հարազատ որդւոց անմեղ արեան
կաթիլները :

2) Պլան թագուհին Լուի Ը. Առիւծա-
սիրտն կոչուած թագաւորին կինն էր : Իւր
որդին Լուի Թ. դեռ մատաղահաս ըլլալով՝

ընդ աղօթքը լսելով այլ եւս իր յուզման չը կրնալ գիտադրելուն՝ գուրս կը դայ իր թաքնուածքէն, իր աննման քրոջ քովը կը թաքնուի, կը գգուէ զայն, կը համբուրէ ու նորահետ մէկտեղ արտասուքով այս աղօթք կ'ընէ. «Շնորհակալ եմ քեզմէ, ով ամենակարող Աստուած, որ այսպիսի քրոջ մ'եղբայր ստեղծած ես զիս. եթէ տիեզերակալ իշխան մը լինէի, այնքան ուրախ եւ երջանիկ չը պիտի լինէի, որքան Գեղեցիկ նման, ազնիւ քրոջ մ'եղբայր լինելովս: Գովեալ ես դու Սուրբ Աստուած եւ բարի են քո գործերը: Գու ինչ որ կ'ամիս այն թող լինի մեզ. դուն գիտես, ով սուրբ Նարեկացի իմ յոյս եւ հավար (օգնութիւն) դու ես, դուն որբերուն պահպան ես, մեր այս արտասուք տե՛ս, հիվի կ'ընեմ (խնդրել):

Սիրակն իր այս աղօթքը արտասուքով լննցնելէ ետք՝ իր քոյր Գեղեցիկ ձեռքէն բռնած, երթանք սիրելի քոյրս կ'ըսէ, երթանք, եթէ Աստուած այդ անմեղ աղջկան բախտն իմ ճակտին զրած է, արդէն մեր լացն ու աղաղակն ալ չ'ըլլայ, անիկայ իմ զամբն (բաժինն) է, եթէ չէ, մենք ինչ ընենք, մինակ մեր սեւ բախտէն գանգատելու ենք, որ զմեզ մեր մանկական օրերէն ի վեր մեր սիրելի մօրմէն զրկեց՝ եւ ինչպէս անզօր թաշնիկի մը փոքր ձագուկներ՝ որք եւ անտէր մնացինք: Մեր հայրըն, այո՛ այն հայրերէն էր՝ որք իրենց զաւակայ վրայ կը մեռնէին, բայց նորա վերջին կրնն՝ այն սեւ սիրտ մօրուն, իր չարութեան թունալիր ամբաստանութիւններով զմեզ մեր սիրելի հօր աչքին սեպուց: Այն միթէ ես մոռցած եմ այն տխուր օրունան դառն յիշատակն՝ երբ դուն մէկ ամսու հարս էիր՝ եւ առաջին դարձդ էր՝ էրկանդ տնէն, ջուր տաքցուցիր թորվան բոցերի վրայ եւ մեր մօրուէն այնքան խնդրեցիր, աղաչեցիր եւ պաղատար, նա չեկաւ քո գլուխը լուաց, դուն մինակ խտար ինքզինքդ լողացնելու եւ քո ոսկեծամ մազերը մէկ ձեռքովդ սանտրած ատեն, գետին թափեցիր: Ա՛հ, Գեղեցիկ, միթէ քո եղբայր կարելի է չը լիչէ այն արտասուքաց կայլակներն, որ քո լըքանալու ջրի հետ խառնուելով զայն աղի դարձուցին. միթէ Սիսակը մոռցած է այն սրտահաւաչ երգի աղէթորով եղանակը զոր դու այն վայրկեանին արտասուքով հետ կը խառնէիր հետեւեալ բառերը կրկնելով.

Այն, որքան սեւ է օրն որբին
Նոր խանդիպի վատ մօրունին,
Նրկինք միթէ դու չե՞ս տեսներ,
Թէ մեր դարտերն ինչքան ծանր են:

Սիրակն իրենց անցեալի այս տխուր յիշատակութիւնով իր քրոջ երեւակայութեանց ուրիշ թախի կուտայ: Մէկ մէկու ձեռքէն բռնած կը հեռանան այն աղբիւրէն՝ որոյ կարկաջահոս վտակի որը մօտը ալեաց հետ կապ ունէր իրենց կեանքը: Յուզեալ եւ այլալած դէմքով կուգան կը մտնեն իրենց հիւղակներն՝ ուրիշ արդէն բաւական ժամանակ ոչխարը մէկնած եւ այդ լննական պարզ կեանքի փոքրիկ թռնիկները վառիլ սկսած էին:

Լ. Ն.

Արեւի ոսկեգոյն ճառագայթները տակաւ առ տակաւ ընդլայնելով բնութիւնը թարմութիւն մը կ'զգենուր: Ստունը Գեղեցիկ հետ աղբիւրի վրայ կը մտածէր թէ ինչպէ՞ս կարելի է ստանալ իր մօր հաւա-

նութիւնն՝ որն որ թէեւ Նարեկի խաթունի նման վատ կիներէն չէր, սակայն կը մտածէր որ թէեւս իր հայր՝ տանուտէր Սիրունի խաթարութիւնն ի նկատի ունենալով մերժէր իւր խնդիրն. ահա՛ այս կամակամական մտածումները կարծես թէ արեւու թեթեւ ճառագայթէն փոքր ինչ թորչումած ծաղիկի մը գոյն ստացած էին նորա չընաղագեղ անբիծ այտերին:

Վարդ խաթունն որ դիտուն ծաղկաբանի մը նման իր խնամօք բողբոջած ծաղկանց վրայ եղած պղտիկ փոփոխութիւն մընչմարտիկ պէս իր սիրելի դստեր դէմքի վրայ եղած դոյլն փոփոխութիւնը կ'ըմբռնէ, մայրական դորովայն հայացքով մը Ստունին կ'ըսէ.

Ինչո՞ւ ծաղկաբոյր ժպտուն դէմքիդ վրայ խաթութեան հետքեր կայ, սիրելի աղջկա:

Ինչպէ՞ս տխուր չ'ըլլամ իմ անուշիկ մայրիկս, քանի որ մեր գիւղի բոլոր աղայմարդիկ, հարսներն ու աղջիկներն այս օր Նարեկայ սուրբ վանքն ուխտի պիտի գնան ու դու զիս թողնելու կամք չ'ես տար, միթէ ես եթէ ուզեմ էլ ուրախ լինել իմ սիրտը ինձ կ'անստայ:

Ո՞վ Ստունն, մայրդ մատաղ կտրի քո գլխուն, դու չ'ես գիտեր թէ ի՞նչ պատճառ զբեղ կ'արգելուն:

Ա՛հ, մայրիկ, ո՛չ, դուք գիտէք արդէն ամեն բան եւ մասամբ պատճառ էք եղած իմ բուռն բռնկման. անշուշտ կը յիշէք Սիսակի հիւանդ լինելու այն մէկ գիշերը. զոր եթէ իմ հայրը լսէր, ձեր գլխին ինչեր պիտի բերէր, իսկ այսօր, արդէն այնպէս օր մէ որ բոլոր հայ քրիստոնեայք ուխտի կ'երթան. միթէ ե՞ս մինակ եմ մեղաւոր, կը խնդրեմ, զիս ալ թողք երթալու:

Քանի որ այդքան կը թախանձես ու քիթ ու մտութիւն մէկմէկու խառնած ես, ինչ ընեմ քեզի ես, դուն գիտես, աղբիւրէն քիչ մը ջուր բեր այս կրակի վրայ տաքցուր, լուացուիր ու ես ալ ելնեմ պաշարի պատրաստութիւն տեսնեմ քեզ: Այս ըսելով Վարդ խաթունն եւ ոտքի ելաւ իսկոյն, ձեռք առաւ այն պատրաստութիւններ որոնք այդ ուխտագնացութեան կը վերաբերէին:

Իսկ Ստունն՝ երբ կը լսէ իր մօր հաճութիւն կը չափազանցի իր ուրախութիւնն. արագաթեւ տատարակի մը նման երգելով ու բերկրութեամբ պատրաստութիւններ կը տեսնէ իր ճամբորդութեան:

Արեգակն երկից կեդրոնը բարձրանալով օրուն հասարակելը՝ ծառոց ու ապառաժից ստուերներին հակադրութեամբ կ'իմանան գեղջուկներ: Գեղեցիկ որ արթուն հրեշտակի մը պէս իր եղբօր նպատակակէտի իրացման կը հսկէր, արդէն իմացած էր Ստունի ազատութիւն ունենալն. ուստի ինքն աւելի անհամբեր այդ ժամուն կ'ըսէ. պակսէր եւ ահա՛ երբ արեգակն երկրի կեդրոնի վրայ իր բազմաձայն աղբիւրը կը հեղու, եւ Գեղեցիկն ամեն ինչ կազմ ու պատրաստ կը տեսնէ իր եղբօր կ'ըսէ. «Սիրելի Սիսակ, օրը մութն է, եթէ ճամբայ պիտի ելնենք, այլ եւս դանդաղելու ժամանակ չը կայ»:

Ինչպէ՞ս է մեր ծրագրի գործադրութիւն, յաջող է, կ'ըսէ Սիսակ:

Շատ յաջող է, իմ քաղցրիկ եղբայր:

Ղ. Պ. ՆԱԶԱՊԵՏԵԱՆ

(Շաբաթօրէն)

Ք Ա Ղ Ո Ւ Ա Ծ

Շ Ա Ք Ա Ռ Թ Ա Կ Ա Ն Լ Ր Ո Յ

Նոյեմբ. 7էն 13

Ա Ր Տ Ա Ք Ի Ն

Պատուանշանաց առեւտարի առթիւ Քաֆարէլ զօրավարի գայթակղական դատն առիթ տուա Քրանսական Հանրապետութեան նախագահ Պ. Կալէվի փեսայ Պ. Վիլսոնի ամբաստանութեան. և այս խնդիր այնքան մեծ կարեւորութիւն մ'ստացաւ, որ նախարարական տաղնադի մ'առիթ տըւաւ: Երկու շաբթի օրը Բարիդէն հեռագիր մը ծանոյց արդարեւ թէ Երեսփոխանաց Ժողովը 242ի դէմ 526 քուէով մերժած լինելով նախարարապետ Պ. Ռուվլյէի մէկ առաջարկը՝ մինչեւ նոյեմբեր 24 յետաձգելու ծայրայեղ ձախակողման հարցադրման խնդիրը, նախարարապետը ծանոյց մ'ողւզին՝ նախարարութեան հրաժարականը: Նախարարական տաղնադն ալ քանի մ'օրուան մէջ նախագահական տաղնադ յառաջ բերաւ, վասն զի Պ. Կալէվի՝ երկրին արդի չըփոթ եւ տաղնադակ կացութեան մէջ, չը գտնելով ո՛չ մէկ բաղադրական մարդ որ ընդունի նախարարապետի պաշտօնը, մտադրութիւն յայտնեց ինքն ալ հրաժարական տալու:

Ի՞նչպէ՞ս այն վճռական յայտարարութիւն թէ Քահաժառանգին կոկորդի ունեցքը քաղցկեղ է, Պերլինի մէջ այնպիսի ծանր եւ ակտուր տպաւորութիւն մ'ըրեր է, որոյ նմանը, կ'ըսէ Թայմսին թղթակիցը, չէր տեսնուած յօրէ անտի յորում՝ 1870ի ամբան մէջ՝ Պերլինցիք իմացան Ֆրանսայի պատերազմի յայտարարութիւնը:

Քանի որ վերջնապէս ապացուցուած է թէ Քահաժառանգին հիւանդութիւնը մահաբեր է, լրագրերն եւ բժիշկներն զբաղեցնող մեծ խնդիրն է թէ Քահաժառանգը սրճափ եւս կրնայ ապրիլ: Մէկ տարիէն մինչեւ հինգ տարի կրնայ եղեր ապրիլ: Տեղ. Մաքէնզի կը խոստովանի որ եթէ քաղցկեղը չնչարգելութիւն պատճառէ, կոկորդը ձեղքել հարկ պիտի լինի, եւ թէ այս գործողութենէ ետքը կենաց միջին տեսլութիւնն է 18 ամիսէն մինչեւ երկու տարի:

Վիլհէլմ Իլխանին վրայ դարձած են Գերմանիոյ եւ Եւրոպիոյ աչքերը. Վիլհէլմ Իլխանն օրուն մեծ մարդն է այսուհետեւ. քանի որ իւր հայր եւ մեծ-հայր հաւանօրէն մի եւ նոյն ժամանակ պիտի չուեն այս ցառոց ձորէն: Վիլհէլմ Իլխան կ'ստաժանի զօրավար (լեյթ) անուանեցաւ: Քաղաքական կարեւորութիւն կը տրուի այս անուանման, եւ կը կարծուի թէ Պետական Խորհրդոյ նախագահութիւնը, Կայսրութեան պաշտպանութեան Խորհրդոյն նախագահութիւնըն, եւ այլ կարեւոր պաշտօնք զորս ցարդ Քահաժառանգը կը վարէր, պիտի յանձնուին Քահաժառանգու Վիլհէլմ Իլխանին:

Վիլհէլմ Կայսրը, Քահաժառանգին կոկորդի հիւանդութեան քաղցկեղային լինելուն պաշտօնական զեկուցումն ստանալով, լացեր է, եւ շատ յուզեալ գիշեր մը անցուցեր է:

Մարտի Կայսրը սիրով ընդուներ է զՊ. Ֆէռօ, Քրանսական դեսպանն, եւ հրամայեր է որ իւր Կառավարութիւն 100000 Քր. հատուցում վճարէ Քրանսացի Պ. Շիլիի ընտանեաց: Կը յիշուի թէ Արարներ անապատի մէջ սպաննած էին այս ըսպայն:

—Բողոքներ կը հեռագրուէին թէ աւելի քան երեք հազար Բողոքներ զուարթութիւն տեսնուեցաւ, եւ քանի մը բանախօսութիւններ արտասուեանէն յետոյ, ըստ արեւելեան բողոք մը բոլորական լեզուին ուսուցման ջանքներ գէտ, զոր ինչպէս յայտնի է, որոշած է Բրուսելոյ Կառավարութիւնը, բոլորական Լեզուաւարութիւն վարժարանաց մէջ լեզուաւ ուսուցումն արդիւնաւոր:

—Վիեննայի արտաքին գործոց պաշտօնատեսը ծանր լուրեր եկան Փարիզի մէջ իրաց կացութեան վրայ, որ զիւանադիտական ակնբոյն մէջ երկիւղալի կը նկատուի: Ինչ ինչ դէպքեր որք մի քանի ամիս առաջ հաւանական չէին համարուիր, շատ մտահոգութեամբ հաւանական կը համարուին այժմ: Պերիլին պաշտօնական ակնբոյն եւս պաշարուած են նմանօրինակ մտահոգութեամբ, եւ ի Փարիզ գործոց ստանալիք վիճակն այս քանի մը օրեր մեծ ուշադրութեամբ պիտի դիտուի:

Նոյս. 15ին, խորհրդարանական յանձնաժողովը լսեց հանրաժանօթ սեղանաւոր Պ. Ռէյսոն Սէյրիէի կողմէ վերջապէս, որ յայտարարեց թէ իւր ամուսին ըսած էր թէ իրեւ երկու միլիոն Փ. տուած է Պ. Վիլլիսի հանրային ձեռնարկութեանց արտօնութիւններ եւ պայմանադրութիւններ ստանալու համար, բայց բան չէր կրցած առնուլ: Պարոնուհին ուրիշ ծանր յայտարարութիւններ ալ ըրաւ, իրեւ իւր ամուսին իմացած:

—Պալատային առնուած լրաց նայելով, 4,000 Մոլլայը համախմբուեալ են ի Պալատա, ժողովուրդը զրոյնքը համար որ զիմագրէ առասկան վարժարանի մը շինութեան քաղաքին Մազարիակ թաղին մէջ: Այս Մոլլայից պէտք, Ալիան խան, եւ իւր շտապիկներէ 40 հոգիք ձեռքակալուեալ եւ քանտարկուեալ են Պալատայի էմիրին հըրամանաւ որ կ'ուզէ հաճոյ երեւիլ ուսն Կառավարութեան: Բայց եւ այնպէս, ըստ կայ թէ խառնութիւն պիտի ծագի եթէ առասկան զարդոյն շինութիւնն սկսի:

—Էյուպ խան, որուն անգլո հնդկի Կառավարութեան անձնատուր լինելը ծանուցուեցաւ, այս օրերս Մէշէտէ կը տարուին Զնդկաստան, ուր պիտի երթան իրեն հետ միանան իւր կանաք եւ գաւակուեց, որք ցարդ թէհրան կը գտնուէին:

Ն Ե Բ Գ Ի Ն

Կայս. Կառավարութեան հրաւիրանք Պառն շիրք մայրաքաղաքս գալու համար Վիեննայէն ճամբայ ելած է և շարաթօրը Սոփիա ժամանելով, կիրակի անտի պիտի մեկնի և երկուշաբթի Պոլսն պիտի ժամանէ:

—Կայս. Կառավարութեան եւ Ռուսանիոյ միջեւ կնքեալ առեւտրական գաւազարը կայս. Իրաւեղով վաւերացած լինելով ստորագրուեցաւ:

—Ինչպէս յայտնի է, Հանրային Պարտուց համար կնքեալ պայմանագիրը կը աւարտագրէ որ նոյն վարչութեան մէջ օսմանեան պարտաւարաց կողմէ եւս ներկայացուցիչ մը գտնուի եւ այս տրամադրութիւն ցարդ գործադրուած չէր:

Արդ, կ'ըսուի թէ սոյն պաշտօն պիտի յանձնուի կայս. թանգարարանի եւ գեղարուեստի վարժարանի տնօրէն Համար պէյի որ միանգամայն պիտի պահէ իւր արդի պաշտօնները:

—Կայս. Կառավարութիւնը նկատելով որ Հոգոս կղզւոյն զիրքը կարեւորութիւն ունի որ օր աւուր կ'աւելնայ, զայն կեղ-

րոն ընտրած է Արշիպիզադոսի կղզեաց նահանգին եւ Հոգոսի կառավարչութեան պաշտօնատեսը փոխադրուած է ի Գիոս որ Մէրէքը Լէֆ որոշուած է:

—Մայրաքաղաքս հասած հեռագիրը կը ծանուցանեն թէ սպանիական Կառավարութիւնն իւր հաւանութիւնն յայտնեալ է Սիւէզի ջրանցքին շէջքացման վերաբերեալ անգլո-ֆրանսական պայմանագրոյն:

—Վեհ. Սուլթանն հրամայած է որ Սէլանիկի ծովածոցին մէջ քարափի եւ նաւահանգստի մը շինութեան մենաշնորհը տրուի Կայս. անձնական Գանձուն նախարարութեան եւ այս նպատակաւ իւր բարձր հովանաւորութեան ներքեւ Հաֆէջէ անուամբ օսմ. ընկերութիւն մը կազմուի: Կայս. անձնական Գանձուն նախարարութիւնը ծանուցած է կայս. այս իրաւեղն առ որ անկ է:

—Կը յիշուի թէ հանրօգուտ շինութեանց նախարարութեան երկրաչափ Պ. Կալան Պալատա զրկուած էր քննելու համար թէ ինչ միջոցներ ձեռք առնուլ կարելի է երկիրն ազատելու համար Եփրատ գետին ուղղութիւնէն: Արդ, Պ. Կալան իւր տեղեկագիրն ուղղած է Հանրօգուտ շինութեանց նախարարութեան, յայտնելով թէ այդ նպատակաւ կատարելի աշխատութիւնը 30-40,000 ոսկի ծախուց կը կարօտի:

—Ռոտտոյոյն առնուած նամակներ կը ծանուցանեն թէ Մկրտչէ Գ. Պայաճեան որ Մալիարայի մօտ իւր ազարակին մէջ աւաղակաց ձեռքն ինկած էր, ազատուելով ողջամբ քաղաք վերադարձեր է:

—Պապը բարեհաճած է Սէն Ս. Գրէգոր պատուանշանի ասպետութեան աստիճան ընծայել Գառնի Պապի գլխաւոր խմբագիր Յովհաննէս Էփէնտի Աճէմեանի:

—Անցեալները լրագրաց միջոցաւ հրատարակուած էր անցագրի նոր օրէնքն որոյ Զ. յօդուածի տրամադրութեան համաձայն անցագրի ծախքն հինգ զրուշ որոշուած եւ սոյն օրինաց գործադրութեան դրուելուն համար երեք ամիս պայմանաժամ տրուած էր: Արդ, պաշտօնական ազդ մը կը ծանուցանէ թէ, նկատելով որ այդ պայմանաժամն այժմ աւարտած է, ցարդ գրտնուած սոյն անցագրերն, որոց վրայ տասն և հինգ զրուշ ծախք նշանակուած է, մինչեւ որ սպառին նոր կնքով մը պիտի կընքուին, սա պարբերութեամբ ըստ վերջին որոշման հինգ զրուշ առնուած է, թէ յետ այսորիկ ներքին անցագրոց համար հինգ զրուշ պիտի առնուի եւ թէ նոյն օրինաց Ե. յօդուածին համաձայն իրենց անցագրերը լեղէ ընելու համար ներկայացնողը ըստպաւած չեն էլ՝ Երազմէր ցոյց տալ այլ միայն իրենց Բեդիէքէ զանգի պիտի ներկայացնեն անցագրին հետ: Պաշտօնական ազդը կը յարէ թէ այս գործողութեան միջոցին, ըստ առաջնոյն տեղափոխութեան արձանագրութեան գործողութիւնն եւս պիտի գործադրուի:

Ա Ձ Գ Ա Յ Ի Ն

Նախարարաց Խորհրդոյ որոշմամբ Բարձր. Արիֆի փաշայի նահապահութեամբ յանձնաժողով մը կազմուած է քննելու համար մեր Պատրիարքարանի և Դատական պաշտօնատան միջեւ օրուան առկա խնդիրներն:

—Ազգային Երեսփոխանաց կողմէ հետեւեալ հանրագիրն ստորագրուած է:

«Իմանալով թէ Ազգային ժողովէն ընտրեալ արդի Բողոքական ժողովոյ ղէմ մի քանի Երեսփոխանաց կողմէ երեւան եկած անհիմն առարկութիւններն բարձրագոյն տեղեր արձագանք գտած են, ստորագրեալ Երեսփոխանքս հարկ կ'իջաւոր յայտարարել թէ՛ Բողոքական ժողովոյ ընտրու-

թիւնն ըստ ազգային Սահմանադրական օրինաց կատարուած է, եւ կը կրկնեմ այս առթիւ մեր լիակատար վստահութիւնը նոր ընտրի Բողոքական ժողովականաց վրայ:

28 Հոկտեմբեր 1887

(66 Ստորագրութիւն)

Այս հանրագիրը չեն ստորագրած նոր ընտրի Բողոքական ժողովոյ անդամ Երեսփոխանք եւ այն քանի մը Երեսփոխանք որք ինչպէս յայտնի է, տարբեր կարծիք ունին այս խնդրոյ մէջ. նոյնպէս եւ հիւանդ կամ Պոլէն բացակայ սակաւթիւ Երեսփոխանք:

—Ամեն. Ս. Պատրիարք Հայրը մէկ քանի օրէ ի վեր հիւանդ լինելով կը դարմանուի բժշկաց ձեռամբ: Բժիշկներն յանձնարարած են Ն. Սմեհապատուութեան կատարեալ հանդարտութիւն:

—Կարնոյ Գաւառական ժողովին կողմէ ի Պատրիարքարան հասած հեռագիր մը կը ծանուցանէ թէ վիճակին առաջնորդ ընտրուած է Գեր. Վահրամ Եպիսկոպոս Մանկունի: Մանկունի Սրբազան հրաժարական զրկած է առ Ս. Պատրիարքն:

—Զորեքշաբթի օրը Քարբերէքէն մայրաքաղաքս ժամանեց տեղւոյն Դատեմի վանուց նախորդ փանահայր Արթ. Տ. Սահակ քահանայ Տ. Սարգսեան:

—Մշոյ Խառն ժողովոյն կողմէ ի Պատրիարքարան հասած հեռագիր մը ծանուցանելով թէ Գեր. Գարեգին Եպիսկոպոս Սրբանձտեանց, որ վերջերս վիճակին վանահայր Առաջնորդ ընտրուած բայց չէր ընդունած զայդ պաշտօն, պատրաստութիւն կը տեսնէ Մուշէն մեկնելու, կը խնդրէ որ պէտք եղած տնօրինութիւնը լինի որպէսզի Ն. Գերապատուութիւն չը հեռանայ:

Կրօնական ժողովն իւր վերջին նստին մէջ նկատողութեան առնելով զայս հեռագիր, որոշեց հեռագրաւ յանձնարարել Գեր. Գարեգին Եպիսկոպոսին որպէսզի յետագայ իւր մեկնումը մինչեւ որ Ազգ. Կեդր. Վարչութեան Խառն ժողովն ի նիստ գումարի:

Կրօնական ժողովը նոյն նստին մէջ որոշեց հեռագրել Կիլիկիոյ Ամեն. Ս. Կաթողիկոսին որպէսզի Զէյթուն երթալով այցելէ եւ միջոցաւ տեղւոյն տարաքաղաքացայինները:

—Զէյթունի հրկիզութեան մասին կատարուած նորագոյն վիճակագրութեամբ ստուգուած է որ 756 տունը, 6 ջրաղացը, 250 խանութը, 5 եկեղեցիք, 2 մատուռք եւ 4 վարժարանք այրած եւ երեք հազարէն աւելի անձինք անպատուար մնացած են:

Մըշէքը Մարտին անուն Ամերիկացի միսիօնարն հրդեհէն քանի մ'օր ետքը Զէյթուն երթալով, 50 ոսկւոյ ծախիւք քսան խցիկներէ բաղկացեալ բնակարան մը շինել տուեր է, պղտորելու համար Հայոց մտքերը:

Օգոստոսիա Սուլթանին բարձր հրամանաց համաձայն՝ հարկը հաշար զրուշի չափ նպաստ բաշխուեալ է ցարդ և տակաւին բաշխելու սահմանուած դումար մ'ալ կայ:

Տարապայման սղութիւն մը կը տիրէ ի Զէյթուն, ցորենի գրիւն (Պոլսոյ չափով) մինչեւ 31 զրուշ ելեր է եւ այս սոսկալի սղութեան պատճառաւ կատարեալ թշուառութիւն ծանրացած է ժողովրդեան վրայ: Ազգային հաստատութեանց շինութեան յանձնաժողովը կ'աշխատի հրկիզեալ եկեղեցիները նորոգել տալու, եւ եթէ իւր նիւթական միջոցը ներքին աւելուտ կարօտեց ալ պիտի օգնէ:

